Որոշեք արդյունավետ հարցերի տեսակները

Հետևյալ օրինակները հարցեր են, որոնք ուսուցիչը կարող է օգտագործել, երբ ուսուցանում է Դանիելի 1–3 գլուխները: Յուրաքանչյուր հարցը կօգնի ուղղորդել սովորողին դեպի ուսումնասիրության օրինակի ցանկալի արդյունքը: Կարդացեք յուրաքանչյուր հարցը և որոշեք, թե ուսումնասիրության օրինակի որ տարրին է այն վերաբերում: Յուրաքանչյուր հարցի դիմաց տրված տարածքում գրեք հետևյալ հապավումներից մեկը.

- **ՀԵԲ** (Հասկանալ ենթատեքստն ու բովանդակությունը)
- **ԳՎՍ** (Գտնել վարդապետությունն ու սկզբունքները)
- **ՀՎՍ** (Հասկանալ վարդապետությունն ու սկզբունքները)
- **ՁՎՍ** (Զգալ վարդապետության և սկզբունքների ճշմարտությունն ու կարևորությունը)
- **ԿՎՍ** (Կիրառել վարդապետությունն ու սկզբունքները)

_____1. Մտածեք մի փորձառության մասին, երբ Դանիելի ու նրա ընկերների նման հավատք գործադրելն օրհնել է ձեր կամ ինչ-որ մեկի կյանքը: Ի՞նչ օրհնություններ են եկել արդյունքում:

_____2. Մտածեք ներկայիս կյանքի մի քանի իրավիճակներ, երբ երիտասարդները կարող են Դանիելի ու նրա ընկերների նման հավատք գործադրել:

_____3. Ըստ Դանիելի 3.25 հատվածի, որտե՞ղ էր Տերը այն պահին, երբ Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը վտանգի մեջ էին:

_____4. Ի՞նչ սկզբունք կարող ենք սովորել այդ հատվածից:

_____5. Հաշվի առնելով հայտնաբերված սկզբունքը՝ ինչ տարբերություն կլիներ ձեր կյանքում, եթե դուք արժանի լինեիք Տիրոջ ներկայությանը ձեր կյանքի մեծագույն վտանգի պահերին:

_____6. Ի՞նչ սկզբունք է լուսաբանում Դանիելի և նրա ընկերների թագավորական ուտելիքից հրաժարվելը (տես Դանիել 1):

_____7. Ինչպես եղավ, որ Նաբուգոդոնոսորի «զորավոր տղամարդիկներին» կրակի բոցը սպանեց (Դանիել 3.20, տես նաև հատված 22), իսկ Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը «դուրս եկան կրակի միջիցը» (հատված 26):

_____8. Սեդրաքի, Միսաքի և Աբեդնագովի նման, մենք ինչո՞ւ պիտի ճաշակենք որոշ բաներ, որոնք աշխարհը հռչակում է լավ:

_____9. Որո՞նք էին Սեդրաքի, Միսաքի և Աբեդնագովի եբրայական անունները: (Տես Դանիելի 1.7):

_____10. Ձեր կարծիքով, ինչո՞ւ Աստված միշտ չի պաշտպանում արդարներին կորուստներից կամ վտանգներից:

_____11. Ձեր կյանքի ինչպիսի՞ իրավիճակներում կարող եք կիրառել Դանիելից ու նրա ընկերներից սովորածը:

© 2016 BY Intellectual Reserve, Inc. ԲՈԼՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԵՆ: